



ՏՆՕՐԷՆԻՆ ԽՕՍՔԸ

Այս տողերը կը գրուին Ծաղկազարդի յաջորդող Երկուշաբթին: Կիրակի առաւօտ, Հայ աւետ. առաջին եկեղեցիին մէջ Կիրակնօրեայի մանուկները երգերով եւ այլապէս նշեցին իրենց սիրելի տօներէն մէկը, պահ մը մոռցնելով շրջանը պատած ծովսն ու սուգը: Ժամեր ետք, շշուկներ սկսան տարածուիլ շրջանի անապահովութեան մասին եւ դպրոցը օրով մը փակեցինք՝ առ ի զգուշացում: Անրտ ամսուան մէջ արդէն 18 օր առցանց կատարուած էին դասաւանդութիւնները՝ իրենց բոլոր անպատեհութիւններով:

Իրական վտանգէն աւելին կ'ապրինք այս օրերուն: Այո, սրտի ճմլումով կը դիտենք Հարաւի քանդումը, ցաւով կը լսենք սպաննութիւններու լուրերը, կ'ընդվզինք աջ ու ձախ ոմբահարումներէն ու կը ցնցուինք «ձայնի պատ»-ը ճեղքող ռազմական օդանաներու զոյգ որոտէն, բայց վտանգը ուղղակիօրէն մեզի չի սպառնար: Սակայն ֆիզիքական վնասէն համեմատաբար հեռու ըլլալը ապահովութիւն չի նշանակեր, երբ հոգիդ խաղաղ չէ: Երբ Չարը կրկին գլուխ բարձրացուցած է ու չի խնայեր իջ մարդուն, իջ շէնքին, իջ մարմինին ու իջ հոգիին:

Աւագ շաբթու մէջ ենք: Կ'ապրինք աւագ շաբաթը: Գեթսեմանին եթէ մեր ներքին խռովքին խորիրդանշանն է, Գողգոթան եթէ իրանանցիին խաչելութիւնն է, ապա բաց գերեզմանը՝ Յարութիւնը, վերապրումի Յոյսը, մեզ ողջ պահող, մեր հոգիներու տագնապներուն բալասանն է ու մխիթարութիւնը. աւելին. չվիատելու, ապրելու, գործելու, արարելու երաշխիքն ու կամքն է:

Քրիստոս յարեաւ իր մեռելոց:

Օրհնեմք է Յարութիւնն Քրիստոսի:

Ա. Յարութեան

ՏՈՔԹ. ՄԻՐԱԼՏԱ ԷՔՄԷՔԻ-ԳԱՍԱՐՃԵԱՆ ԿՐԹԱՆՊԱՍՏԻ ՖՈՆՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Դպրոցի շրջանաւարտներ եւ բարեկամներ Էքմէքճի եւ Գասարճեան ընտանիքները 2026-ին հաստատեցին իրենց հարազատին՝

հանգուցեալ տողք. Միրալտա Էքմէքճի-Գասարճեանի

անունը կրող հիմնադրամ մը, որ պիտի ծառայէ արժանի աշակերտներու կրթանապատով օգնելու, որպէսզի անոնք կարենան իրենց ուսումը շարունակել ՀԱԳ-ԷՆ ներս:

Շնորհակալութիւն կը յայտնենք ազնիւ բարերարներուն եւ կ'աղօթենք, որ տողք. Միրալտային յիշատակը օրինեալ ըլլայ:

ՏՈՔԹՈՐՆԵՐ ՏԵՐ ԵՒ ՏԻԿ. ՆԱԶԱՐԵԹ ԵՒ ԱՆԻ ՏԱՐԱԳՃԵԱՆՆԵՐՈՒ 50.000 ՏՈՒՄԻ ՅԱՏԿԱՑՈՒՄԸ

Լոս Անճելոսաբնակ ՀԱԳ-ի շրջանաւարտներ **տողք. Նազարեթ եւ տողք. Անի Տարագճեան**, ընդառաջելով պատուակալ տնօրէնի Նամակին, սիրայօժար կերպով 40.000 տոլար նուիրեցին դպրոցի մանկապարտեզի բարելաման ծրագրին: Անոնք Նաեւ դպրոցին իրենց կատարած տարեկան յատկացումի գումարը կրկնապատկեցին սրտաբուլի կերպով նուիրելով 10.000 տոլար:

Մեր խորին շնորհակալութիւնները բարերար զոյգին:



▶ Հայկական ժողովրդական գործիքներ

Ուրբաթ, 9 Յունուարին մեծ հաճոյքով հիւրընկալեցինք լիբանանահայ երաժիշտ, խմբավար ու մշակութային գործիչ պարոն Զաքար Քէշիշեանը, որ իրեն յատուկ անմիջականութեամբ ու ձեռնհասութեամբ աշակերտներուն խօսեցաւ հայոց մէջ գործածուող ժողովրդական գործիքներու մասին:



▶ Առողջապահական ջուր

Ուրբաթ, 16 Յունուարին, մեր 7-12-րդ դասարաններու աշակերտները հաճոյքով հետեւեցան պրն. Տէյվիտ Թութունճեանին, որ անոնց ծանօթացուց «Կենդանի» ջուրը եւ համեմատեց զայն շշալցուած ու ծորակի ջուրին հետ՝ շեշտելով ջուրի կարեւորութիւնը մեր մարմնին եւ ընդհանուր առողջութեան համար: Գործնական փորձարկումներու միջոցով, աշակերտները բացայայտեցին ջուրի տարբեր տեսակներու եւ զովացուցիչ ըմպելիքներու pH մակարդակները, եւ վերջաւորութեան նաեւ հնարաւորութիւն ունեցան համտեսելու առողջապահական «Կանգէն» ջուրը:



▶ Քննութիւններու նախապատրաստում

21 Յունուար օրդ. Սէրլի-Ռոզի Շահինեան (2025-շրջ) ժամանակ անցուց մեր նախակրթարանի աշակերտներուն հետ՝ անոնց տալով անհրաժեշտ խորհուրդներ, ուղղորդում եւ քաջալերանք՝ քննութիւններու նախօրեակին:



▶ Կիսամեայ քննութիւն

Յունուար 26-ին սկսան կիսամեայ քննութիւնները 5-րդէն 12-րդ դասարաններուն համար: Առիթ էր ուսանողներուն վերաքաղելու եւ ամրապնդելու նախապէս իրենց սորվածները:



▶ VEX IQ Driving Competition

Ի պատրաստութիւն BTC Academy-ի VEX IQ Driving մրցումին, 13 Փետրուարին տեղի ունեցան ներդարոցական գտումի մրցումներ:



▶ Վարդանանց տօնակատարութիւն

13 Փետրուարին աշակերտները նշեցին Ս. Վարդանանց տօնը: Անոնք ներկայացուցին օրուան պատշաճող գեղարուեստական յայտագիր: Վարդանանց պատգամը յղեց տնօրէնը, որ կեդրոնացաւ անանուն զինուորի սխրանքին վրայ:



▶ Այցելութիւն «Կիլիկիա» թանգարան

18 Փետրուարին ՀԱԳ-ի 7-րդ, 8-րդ եւ 10-րդ դասարաններու աշակերտները ուսուցիչներու ընկերակցութեամբ այցելեցին Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Կիլիկիա» թանգարանը, ծանօթանալով մեր ազգային եւ հոգեւոր պատմական ժառանգութեան:



▶ «Միջազգային օր»

20 փետրուարին ՀԱԳ-ի աշակերտները ունեցան շատ հաճելի պահեր՝ համադամ ուտելիքով, երգ ու պարով, խաղերով լի: Արդարեւ այդ օր Աշակերտական խորհուրդը կազմակերպած էր «Միջազգային օր», որուն ընթացքին 7-րդէն 11-րդ դասարաններու աշակերտներ դաստիարակներու աջակցութեամբ ամբողջ աշակերտութեան ներկայացուցին թատերական պատկերներ, պարեր, ինչպէս եւ գիտելիքներու փոխանցումով ու ազգային խոհանոցի մատուցումով ներկայացուցին Ֆրանսան, Եգիպտոսը, Իտալիան, Յունաստանը եւ Սպանիան: Թաքուն շնորհքներու յայտնաբերման եւ միասնաբար զուարճանալու հոյակապ պահ մըն էր, որուն համար կը շնորհաւորենք պատրաստողները, մասնակիցները եւ մանաւանդ՝ Աշակերտական խորհուրդը:



▶ «Ապագայ լրագրողներ»

Չորեքշաբթի, 25 փետրուարին, ՀԱԳ-ի երկրորդական բաժնի աշակերտներուն հետ հանդիպում մը ունեցաւ օրդ. Արշօ Պալեան, որ ներկայացուց «Ազդակ» օրաթերթի «Ապագայ լրագրողներ» նախագիծը, բացատրութիւններ տալով ընդհանրապէս լրագրութեան մասին, միաժամանակ ներկայացնելով անոր գրաւչութիւնն ու կարելոթիւնը: Նախքան ասարտը, աշակերտներ կարճ փորձ մը կատարեցին շարադրելով պարբերութիւն մը «Ընկերային ցանցերը թշնամի են, թէ՛ ընկեր» նիւթով:



▶ Աշխատանոց

Փետրուար 26-ին, ուսուցիչները մասնակցեցան իրենց հինգերորդ կրթական աշխատանոցին, որ ներկայացուց Դոկտ. Թալին Անըրլեան:



▶ Ծնողական Բ. ժողով

Ուսուցիչ-ծնողք տեսակցութիւններէն առաջ, հաճոյքով ողջունեցինք Cenacle de la Lumière-էն պր. Էլի Ապտ Էլ Սաթըրը եւ տիկ. Թինա Պասիլին, որոնք ներկայացուցին արժէքաւոր սեմինար մը՝ ֆիզիքական եւ հոգեկան լարուածութիւնը կառավարելու մասին:





Սուրբ Ծննդեան պաշտամունք Աշրաֆիեի Հայ աւետ. կեդր. բարձ. վարժարանի մանկապարտեզն ներս:



27 Յունուարին տիկ. Հուրի Ղազարեան այցելեց մեր մանկապարտեզի աշակերտներուն. անոնց հետ ժամանակ անցուց պատմութիւններ պատմելով եւ ձեռային աշխատանքներ կատարելով ու խաղեր կազմակերպելով:

Շնորհակալութիւն մանկապարտեզի ծնողներուն՝ միշտ ներգրաւուած եւ աջակցող ըլլալուն համար: Միասին՝ մենք մէկ ընտանիք ենք:



Տարեդարձեր



Students Appreciation



Ուսուցչաց Կադանդի ճաշկերոյթ



Most compassionate

Most Determined

Most Festive



Համալսարանական Արեւելում



Մարիա Պողոսեան
եւ Մարիա Էլմաճեան

NDU 13 Փետրուար



Սերենա Հաւանճեան (5րդ)

Lebanese Rhythmic Gymnastics
մրցանքներու եռակի
մրցանակակիր



Լախակրթարանի պտոյտ դէպի
Parcours des Saveurs Զֆարշիմա

6 Փետրուար 2026



Բարեկենդանի տօնակատարուիւթին

Լախակրթարան

11 Փետրուար



Տարեդարձներ





4 Փետրուար 2026-ին Սթոքհոլմի մէջ Շուէտի Քարլ Կիւսթաւ ԺԴ. թագաւորը 8-րդ աստիճանի Սերաֆիմեան շքանշանով պարգեւատրեց «Սեւան» սննդարդիւնաբերական ընկերութեան հիմնադիր եւ վարչութեան նախագահ **Հրաչ Մարութեանը** (1966-ի շրջ.): Պարգեւատրումը կայացաւ հիւսիսային Սթոքհոլմի արքայական պալատին մէջ «Սեւան»-ի ամբողջ անձնակազմի ներկայութեամբ:

ՀԱԳ-ի մեծագոյն բարերար եւ երկարամեայ նախկին աշակերտ (1964 - 1974) **Ռաֆֆի Մանուկեան** Լոնտոնի Էյի ոռոտ սթիւտիոյ մէջ, կազմակերպութեամբ Պենթի հաստատութեան, իր ծննդեան 70-րդ տարեդարձը տօնեց 11 Դեկտեմբեր 2025-ին: Այս առթիւ պատրաստուած տեսաերիզին միջոցով իր գնահատական-շնորհաւորական մաղթանքը յղեց նաեւ ՀԱԳ-ի պատուակալ տնօրէն դոկտ. Զ. Մարրլեան:



Լոս Անճելոսի «Մասիս» շաբաթաթերթի նախկին խմբագիր **Յարութեան Տէր Դաւիթեան** (1971-ի շրջ.) 2025-ի վերջաւորութեան լոյս ընծայեց 1991-2024 տարիներու ընթացքին իր լոյս տեսած յօդուածները պարփակող «Ինչ ընել որպէս չկրկնուին անցեալի սխալները» 456 էջնոց գիրքը: Գիրքը կը սկսի Դոկտ. Զ. Մարրլեանի «վկայութիւն մը» գրութեամբ:



«Հայկազեան հայագիտական հանդէս»-ի 17 Փետրուար 2026-ին կայացած 45-րդ հատորի շնորհահանդէսին վեր. դոկտ. Փօլ Հայտոսեան յայտարարեց թէ **տոքթ. Վիգէն** (շրջ. 1967-ի) եւ **տիկ. Սօսի** (ծն. Համալեան շրջ. 1969-ի) **Ահարոնեան** յառաջիկայ 7 տարիներու «Հանդէս»-ի հրատարակութեան ծախսերուն համար 105.000 տոլար նուիրած են:



21 Յունուար 2026-ին Տաուսի միջազգային գազաթափողովի ընթացքին երկարամեայ նախկին աշակերտ հանրաձանօթ գործարար **դոկտ. Նուպար Աֆէեան** տեսակցեցաւ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ:

Դոկտ. Արա Թէքեան (1971-ի շրջ.) Նոյեմբեր 2025-ին արժանացաւ տոքթ. Ճորճ Պոնտէյճի անուան բժշկական կրթութեան փրոֆեսորի կոչումին եւ համալսարանի գիտական բարձրագոյն մրցանակին:



Համազգայինի «Գայիանէ» պարի եւ պալէի դպրոցը 20 եւ 21 Դեկտեմբեր 2025-ին Լա Սաժէս հանդիսասրահին մէջ ներկայացուց Չայքովսքիի The Nutcracker ստեղծագործութիւնը: Տարագները եւ բեմական ձեւաւորումը իրագործած էր տիկ. **Նայիրի** (ծն. Ալեքսանյրեան) **Կէօզիպէիքեան** (1990-ի շրջ.): Ելոյթի գլխաւոր մենակատարն էր **Սէրիլ-Ռոզի Շահիեան** (2025-ի շրջ.):



22 Նոյեմբեր 2025-ին Փարիզի հայահոծ արուարձաններէն Իսի լէ Մուլիտոյի մէջ ՀՄԸՄ-Ֆրանսի մշակութային եւ մարզական կեդրոնի բացումը կատարողներէն էր ՀԱԳ-ի բարերարներէն երկարամեայ նախկին աշակերտ **Հրաչ Սիսեռեան**:

22 Նոյեմբեր 2025-ին Էշրէֆիէի Ս. Յակոբ եկեղեցոյ սրահին մէջ գնահատանքի երեկոյ մը տեղի ունեցաւ ուր պարգեւատրուեցան եկեղեցոյ նուիրեալները, որոնց շարքին էր թաղականութեան նախկին ատենապետ եւ ՀԱԳ-ի Պէլրոյթի շրջ. միութեան նախկին ատենապետ **Յակոբ Ալլըքեան** (1953-ի շրջ.):



Ի Երեւանի Աւետիսեան դպրոցի շրջափակէն ներս 29 Սեպտեմբեր 2025-ին բացումը կատարուեցաւ «Շող» համայնքային ցերեկային կեդրոնին, ձեռամբ գլխատր բարերարներ տէր եւ տիկ. **Հրաչ եւ Հելկա** (ծն. Մաղապեան, 1971-ի շրջ.) **Սարգիսի**:



Ընտանիքը Խաչատրեան-Արուստագէտ **Յակոբ Միլլահեան** (1978-ի շրջ.) աշխարհի 12 երկիրներ ներկայացնող արուեստագէտներէն մին էր, որ ներկայացուց Լիբանանը Չինաստանի Վուշի քաղաքի Կրիստափէլ թանգարանին մէջ Յունիս 2025-ին: Նշենք, որ անոր արուեստի գործը ընդգրկուեցաւ թանգարանի մնայուն ցուցանմուշներուն մէջ:



Ի 29 Դեկտեմբեր 2025-ին **Զաւէն Գոյումճեան** (1987-ի շրջ.) Լիբանանի ամերիկեան համալսարանի շրջանաւարտներու «100/100 The full grade» փոսքաթի ընդմէջէն Պասայտայի նախագահական պալատին մէջ հարցազրոյց մը վարեց նախագահ զօր. Ժոզէֆ Աունի հետ:



Ի ՀԱԳ-ի նախկին աշակերտ (1977 – 1987) **փրոֆ. Կարէն Մարգարեան** ընտրուած է Leman Fellow of Hoffmann Centre For Global Sustainability, Ժնեւի Կրածուէթ հիմնարկին մէջ:

Ի 24 – 26 Հոկտեմբեր 2025-ին Փասատնիայի ՀԲԸՄ-ի Վաչէ եւ Թամար Մանուկեան մշակութային կեդրոնի Պոյաճեան սրահին մէջ տեղի ունեցաւ ցուցահանդէս մը, կազմակերպութեամբ ՀԲԸՄ-ի Փասատնիա-Կլենտլլ մասնաճիւղին: Ընտանիքը Խաչատրեան **Ենուք Պալիկեան** (1949-ի շրջ.) եւ ՀԱԳ-ի նախկին ուսուցիչ) երկար տարիներու ընթացքին իր հաւաքած արուեստի գործերը (79 կտոր) եւ զարդարուեստի նմոյշները վաճառքի դրաւ եւ հասոյթը յատկացուց ՀԲԸՄ-ի երիտասարդ սերունդի ծրագիրներու իրագործումին:



Ի **Տիգի Քիրքճեան** (2013-ի շրջ.) վերջերս շարժանկարային ժապաւէններու խմբագրութեան արուեստին մէջ տիրացաւ Մագիստրոսի աստիճանի Լոնտոնի Կոլտոմիթ համալսարանէն:



Ի **Ռէա Էքմէքճի** (2015-ի շրջ.) 11 Յունուար 2026-ին հանդիսավարած է ՀԵԸ-ի 14-րդ ընդհանուր վարչական ժողովի զեկոյցներու եւ ծրագիրներու ներկայացումը, միութեան համայնքային կեդրոնի «Պերճ եւ Վերա Սեդրակեան» սրահին մէջ:



Ի 6, 7 եւ 8 Փետրուար 2026-ին Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ Յարութ Գնդունիի բեմադրութեամբ «Միեր Մկրտչեան» թատերախումբը ներկայացուց «Ամուսինը ծուղակի մէջ» կատակերգութիւնը, ուր դեր ունէր **Հրակ Մամիկոնեան** (2023-ի շրջ.):



Ի **Տորին Զէյն** (ծն. Խանասիրեան, 1979-ի շրջ.) Պէյրութի Աժեպլ արթ կայերիին մէջ 28 Յունուարէն 28 Փետրուար 2026-ին ցուցադրեց իր «Արթնցող աշխարհը» խորագրեալ նկարչական գործերը:




Ի 27 Փետրուար 2026-ին Համազգայինը Պէյրութի ամերիկեան համալսարանի Էսեմպլի հոլին մէջ ներկայացուց «Լոյսին հետ, դէպի լոյս» յայտագիրը, Հայաստանի ազգային սենեկային նուագախումբին եւ մենակատարներու մասնակցութեամբ: Դաշնակի վրայ ընկերակցողն էր **Մարիա Փալազեան-Բարսեղեան** (2007-ի շրջ.): Նոյն խումբին հետ ան նախապէս ելոյթ ունեցաւ նաեւ Երեւանի մէջ, 24 Փետրուարին:



Ի Գիտնական **Օհան (Ճոն) Արմէնեան** (1965-ի շրջ.) իր թեկնածութիւնը դրած է ԱՄՆ-ի ներկայացուցչական Տան՝ Քոնկրեսի, ընտրութիւններուն, որոնք պիտի կայանան Նոյեմբեր 2026-ին:




Ի 1986-ի շրջանաւարտ **Հեղնար Զէյթեան-Ուաթինպօ** Ֆրանսայի ԻՆՍԼԲՕ հաստատութեան IMAS մագիստրոսական ծրագրի ծիրէն ներս կազմակերպուած Հայաստանի մշակութային ժառանգութեան պահպանմանը գիտաժողովին ելոյթ ունեցած է «Վերապրած առարկաներ եւ գերեվարուած վայրեր. Արուեստը և մշակութային ժառանգութիւնը ցեղասպանութեան ընթացքին» նիւթով:




ԻՐԵՆՑ ՅԱԿԻՏԵՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՏԸ ՄՏԱՆ...



† ՀԱԳ-ի մանկապարտեզի նախկին մնայուն վաստակավոր ուսուցչուհի (1965 – 1985) օրդ. **Հերմինե Խաթունեան** (ծն. 1937) մահացաւ Պէյրութի մէջ:



† 1952-ի շրջանաւարտ **Վահէ Պեղճեան** (ծն. 1935) 16 Յունուար 2026-ին մահացաւ Լոս Անճելոսի մէջ:



† AMAA News-էն տեղեկացանք մահը 1950-ի շրջանաւարտ **Կորնի Արա Թորեանի** (ծն. 1933) 11 Մեպրեմբեր 2025-ին, Տրիքամ, Նորթ Կարոլայնա, ԱՄՆ-ի մէջ:



† 1967-68-ի ՀԱԳ-ի ուսուցիչ **Վեր. Յովհաննէս Մելքոնեան** (ծն. 1931) մահացած է 24 Մայիս 2025-ին Լոս Անճելոսի մէջ:

† Յապաղումով լսեցինք մահը 1961-ի շրջանաւարտուհի հիւանդապահուհի **Էլիզ Մուրատեանի** (ծն. Թումանյանեան 1943-ին) մահը, որ տեղի ունեցած է Ֆրանսայի մէջ, երեք տարի առաջ:

ԲԱԽՏԱԴՈՐՈՒԹԻՒՆ

👉 Կարօ Թորգոմեան (2002-ի շրջ.) և իր տղային 4 Դեկտեմբերին բախարատորութեան առջիննէլ դուստրով մը՝ Ալիքի, Պէյրութ:

ՆՇԱՆՏՈՒՔ

👉 28 Դեկտեմբեր 2025-ին Կարինէ Գիւլիանճեան (2017-ի շրջ.) նշանուած է Անդրանիկ Թեքքեւեանի հետ, Պէյրութ:

👉 22 Դեկտեմբեր 2025-ին Լարա Կիւլիանեան (2016-ի շրջ.) նշանուած է Ճոնի Նասասարի հետ, Պէյրութ:

Խմբագիր՝ ՏՅՕՐԵՆ ՂՈՎՏ. ԱՐՄԵՆ ԻՐԵՆՇԵՆԱՆ
 Խորհրդատուներ՝ ՏԻՍՐ ՆԵՐՍԵՍ ՊԱՊՏՈՅԵԱՆ
 Էջադրում՝ ՏԻՍՐ ՅԱՎՈՐ ՏԵՄԻՐՃԵԱՆ
 ԱՆԻ ԲԵՏԵՆԵԱՆ ՊԱՍԵՐ
 Մ.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՆՈՒՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՐԱՏՈՒ-ի նախորդ թիւէն ի վեր հետեւեալ նուիրատուութիւնները շնորհակալութեամբ ստացուած են:

ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՏՈՂԱՐՈՎ ԵՆ

ՏՈՔԹ. ՄԻՐԱՆՏԱ ԷԲՍԵՔՃԻ-ԳՎԱՍԱՐՃԵԱՆ ՖՈՆՏ
 Էքմէքճի ընտանիք 30.000

AMAA-ի կողմէ
 Բ. Եռամսեանի կրթաթոշակի նեցուկ 9950
 Անմիջական Նպաստ Լիբանանի դպրոցներուն 4958

ՄԱՀԱԵ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՅՈՎ
 HEKS Lebanon Schools Support 9500
 WCM Lebanon Schools Support 1945
 Fondation des Cedres Lebanon Schools Support 4329

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
 Ուսուցչաց ամսականներու մասնակի հատուցում 4042

«Հ.Բ.Ը.Մ.-ի ԶԱԲԵՆ ՄԱՐԸԵԱՆ ՄՐՅԱՆԱԿ
 2500
 Պատուակալ տնօրէնի փափաքով սոյն գումարը յատկացուեցաւ դպրոցի կրթանպաստի ֆոնտին:

ՈՐՊԵՍ ԸՆԴՈՎԱԶՈՒՄ ՊԱՏՈՒԱԿԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԿՈՉԻՆ (Բ. ՅԱՆԿ)
 Շրջանաւարտ Լեւոն Կալեան (ԱՄՆ) 200
 Տէր ԵՆ Տիկ. Ռաֆֆի ԵՆ Թամար Փանոսեան (Գանատա) 250

ԱՅՆ ՆՈՒՐԱՏԻՈՒԹԻՒՆ
 Շրջ. Սարգիս Սիմիթեանի տարեկան յատկացում 1000
 Ոմն շրջանաւարտ (Երրոպա) 200

ՊՍԱԿ

👉 ՀԱԳ-ի մանկապարտեզի ուսուցչուհի օրդ. **Մարինա Մկրտիչեան** պսակուած է Յարութ Գազէզեանի հետ Հայ կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցիին մէջ, 7 Դեկտեմբեր 2025-ին:

👉 **Նարեկ Տէրտէրեան** (2016-ի շրջ) Լոս Անճելոսի մէջ պսակուած է օրդ. **Սալիի Սրայիոնեանի** հետ 15 Մարտ 2026-ին:

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE
 P.O. Box 3672-Beirut
 Tel: 01 349 816 Fax: 01 751 469
 E-mail: A_E_C@cyberia.net.lb
 Website: aecbeirut.edu.lb
 Facebook: Armenian Evangelical College